

ՀՏԴ. 809. 198.1Հայոց լեզու

Օֆելյա ԲԱԲԱՅԱՆ

ԱրՊՀ, ք.գ.թ., պրոֆեսոր, ակ.Ս. Արրահամյանի անվամ հայոց լեզվի ամբիոն

E-mail: o.e.babayan@mail.ru

ԳՐԱԲԱՐԸ ԵՎ ՄԵՆՔ

Գրաբարը՝ հին հայերենը, մեր նախնիների խոսակցական լեզուն է եղել: Մինչև գրավոր լեզու դառնալը հայերենն անցել է պատմական զարգացման երկարատև ուղի՝ նախագրային ժամանակաշրջան: Այն գրավոր լեզու է դարձել V դարի սկզբին, երբ ստեղծվել են մեսրոպյան գրերը: Հայոց լեզվի գրային շրջանի մեջ ընդունված է տարբերակել երեք փուլ՝ **հին, միջին և նոր:**

Բանալի բառեր՝ գրաբար, ժամանակակից հայոց լեզու, արևելահայերեն, արևմտահայերեն, դասական ուղղագրություն, գրաբարյան քարացած հոլովաձևեր, բայական համակարգ:

Օ. Բաբայան

ГРАБАР И МЫ

Грабар является основой армянского языка и помогает правильно понимать многие явления современного армянского языка, происхождение и развитие слов и словоформ, учит классическому правописанию, которое сохраняется на западном армянском языке. Наша политическая независимость также изменила функционирование армянского языка, сегодня большое значение придается знанию как габара, так и восточноармянского и западноармянского языков. В статье объясняется ряд устойчивых фраз габара, которые используются в современном армянском языке.

Ключевые слова: грабар, современный армянский язык, восточноармянский, западноармянский, классическая орфография, древнеармянские устойчивые словоформы склонения, глагольная система

O. Babayan

GRABAR AND WE

Grabar is the basis of the Armenian language and it helps to correctly understand many of the phenomena of the modern Armenian language, the origin and development of words and word forms, teaches the classical spelling that is preserved in Western Armenian. Our political independence has also changed the functioning of the Armenian language, and today great importance is given to the knowledge of both grabar and Eastern and Western Armenian languages. The article explains a number of set expressions of grabar, which are used in modern Armenian.

Keywords: grabar, modern Armenian, modern Armenian language, Eastern Armenian, Western Armenian, classical spelling, ancient Armenian set expressions of declension, verb system

Հին շրջանն ընդգրկում է 5-11-րդ դարերը: Նրա լեզուն հին հայերենն է, որի խոսակցական հիմքը Հայաստանի կենտրոնական մասի, Այրարատի, Տուրուբերանի, Տարոնի հաղորդակցման լեզուն է: Հին գրական հայերենը հայությանը հասկանալի է եղել շուրջ յոթ հարյուր տարի, բայց իբրև գրական լեզու՝ երկար դարեր գործածվում էր և գրականության մեջ իր տեղը զիջել է նոր լեզվին հիմնականում XIX դարում: Իբրև պաշտամունքային լեզու՝ գրաբարը այժմ էլ գործածվում է Հայոց եկեղեցում: Դարերի ընթացքում հին հայերենի խոսակցական տարբերակը հեռացել է գրականից, դարձել գրեթե անհասկանալի: Ժողովուրդն այն կոչում էր «գրոց» լեզու, այստեղից էլ «գրաբար» անվանումը: Հայոց լեզվի հին և նոր փուլերի լեզուն «գրաբար» և «աշխարհաբար» են անվանվել 19-րդ դարի կեսերին՝ գրապայքարի շրջանում: Հայ ժողովուրդն իր լեզուն միշտ անվանել է հայերեն, և կարելի է ասել նաև *հին հայերեն* և *նոր հայերեն*:

Գրաբարով ստեղծվել է հարուստ ու բազմաբնույթ ինքնուրույն և թարգմանական գրականություն: Առաջին թարգմանված երկը *Աստվածաշունչն* է՝ հին և նոր կտակարաններով: Այդ մասին Մեսրոպ Մաշտոցի աշակերտ Կորյուն վարդապետը «Վարք Մաշտոցի» երկում գրում է. «Եւ ապա հանդերձ օգնականաւք իւրովք իջանէր ի քաղաքն Մամոսատացոց, յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն եւ յեկեղեցոյն մեծարեալ լինէր:

Եւ անդէն ի նմին քաղաքի ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկուք, աշակերտաւքն իւրովք, որոց առաջնոյն *Յովհան* անուն կոչէին *յեկեղեց* գաւառէն եւ երկրորդին *Յովսէփ* անուն ի *Պաղանական* տանէն: Եւ եղեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս նախ յԱռակացն Սողոմոնի, որ ի սկզբան իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ եթէ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ, ընդունել զդարձուածս բանից, ի միտ առնուլ զարդարութիւն ճշմարիտ եւ ուղղել զիրատունս: Զի տացէ անմեղաց զխորագիտութիւն, մանկանց տղայոց զմիտս եւ զհանճար: Որոց իբրեւ լուսիցէ իմաստունն՝ իմաստնագոյն լիցի. Իսկ որ հանճարեղն իցէ՝ զառաջնորդութիւն ստացի, ի միտ առցէ զառակս եւ զբանս խորինս, զճառս իմաստնոց եւ զառակս խոցա»¹:

¹ Տե՛ս Աբրահամյան Ա., *Գրաբարի ձեռնարկ*, Եր., 1976, էջ 289:

Գրաբարի՝ գիտական սկզբունքներով կազմված առաջին բացատրական բառարանը Մխիթար Մեբաստացու բառարանն է, որը բանասիրության մեջ կոչվում է նաև Հին հայկազյան բառարան՝ «Բառգիրք հայկազեան լեզուի»: Նրա առաջին հատորը լույս է տեսել 1749-ին, երկրորդը՝ 1769-ին Վենետիկում: Նոր հայկազյան բառարանը՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», բաղկացած է երկու հատորից, հեղինակներն են Գաբրիել Ավետիքյանը, Խաչատուր Մյուրմեյանը և Մկրտիչ Ավգեյանը. լույս է տեսել Վենետիկում 1836-37 թթ.: Երևանի պետական համալսարանը բառարանը վերահրատարակել է 1979, 1981 թթ.: Այդ բառարանի համառոտությամբ ու բաց թողնված բառերի հավելումով Մկրտիչ Ավգեյանը կազմել է «Առձեռն բառարան հայկազեան լեզուի»: Տպագրվել է Վենետիկում 1846 և 1865 թթ.:

V դարի հայ գրական լեզուն մշակված ու կանոնիկ է և «հետագա սերունդներին զարմացնում է իր կանոնավորությամբ, բառապաշարի ճոխությամբ, դարձվածքների բազմազանությամբ, շարահյուսական ձևերի գործածության անկաշկանդ ազատությամբ»¹: Գրաբարն այսօր խոսակցական լեզու չէ: Բայց, ինչպես մեր մանկությունը, միշտ մեզ հետ է, ներկա է մեր ամեն մի նախադասության, արտահայտության մեջ: Ճիշտ են նկատել, որ մենք բարևից մինչև ցտեսություն խոսում ենք գրաբար, բայց չենք գիտակցում: Հայոց հին գրական լեզուն՝ գրաբարը, հայերենի հիմքն է և օգնում է մեզ՝ ճիշտ հասկանալու ժամանակակից հայերենի շատ երևույթների, բառերի և բառաձևերի ծագումն ու զարգացումը, սովորեցնում ավանդական, դասական ուղղագրությունը, որը պահպանվում է արևմտահայերենում:

Գրաբարյան քարացած շատ բառաձևեր են գործածվում արդի հայերենում: Փորձենք որոշ չափով խմբավորված ներկայացնել մի մասը:

1 ՀՈՒՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1. Ուղղական հոլով: Հայտնի է, որ հոգնակի թվում ուղղական հոլովն ունի *ք* հոլովակերտը: Ներդրական (ներքին) հոլովումների դեպքում բառի վերջին բաղաձայնից առաջ կարող է հանդես գալ *ու, ի, է, ա* ձայնավորներից մեկը՝ *հայրենի-հայրենիք, արքունի-արքունիք, բարի-բարիք, տեղի-տեղիք (տեղի տալ և տեղիք տալ), գիր-գիրք, մասն-մասունք, հարսն-հարսունք, սկիզբն-սկզբունք, մանուկ-մանկունք, աղջիկ-աղջկունք, շուրթն-շրթունք, դիւցազն-դիւցազունք, ծաղիկ-ծաղկունք, բարձր-բարձունք, անձն-անձինք, դաշն-դաշինք, եզր-եզերք (տի+եզերք), տարր-տարերք, սերմն-սերմանք, կողմն-կողմանք:*

Նույն սկզբունքով է կազմվում *-ումն* ածանցով վերջավորվող բառերի հոգնակի ուղղականը՝ *բաժանումն - բաժանմունք, ուսումն-ուսմունք, ցուցումն-ցուցմունք, հարցումն-հարցմունք, հուզումն-հուզմունք, վարումն-վարմունք:* Գործածական են

-իք մասնիկ ունեցող մի շարք անեզական հասարակ և հատուկ անուններ՝ *ընթրիք, կարիք, ժանիք, կեղծիք, օձիք, արգասիք, անդրավարտիք, երախտիք, հարսանիք, կարծիք, չարիք, Տնորիք, Աղձնիք, Միւնիք* և այլն: *-անք* ածանցով՝ *աղաչանք, բաղձանք, զարդարանք, զարմանք, զբօսանք, լլկանք, կալանք, հալածանք, հանգամանք, հոսանք, մեծարանք, յանցանք, յարգանք, պատրանք, պարսաւանք, պերճանք, սահանք, մեղադրանք, փշրանք, արտադրանք, փականք,*

¹ Տե՛ս Առաքելյան Վ., *Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության*, Եր., 1981, էջ 59:

կապանք, աշխատանք և այլն: **-ք**-ով՝ ասք, արեւելք, արեւմուտք, խօսք, ցնորք, հնայք, աղօթք, անէծք, առանցք, կուրծք, ինչք, դժոխք, կուռք, պահք, բարք, վարք, պարտք, խելք, կամք, կառք, փառք, գնացք և այլն:

Կին և տիկին բառերից բացի՝ գրաբարում մի քանի բառեր ևս հոգնակի ուղղական հոլովում ստանում են **-այք**, նաև **-եայք՝ ծովեզերեայք կամ ծովեզերայք** (=ծովափնյա, ծովափի առարկաներ, ծովափեր), **հայաստանեայք** (=հայաստանցիներ), **ասորեստանեայք** (=ասորեստանցիներ), թեք հոլովներում՝ **հայաստանեայց, հայաստանեաց, ասորեստանեայց**¹ (Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի):

2. Անեզական հատուկ և հասարակ անունների և այլ բառերի սեռական, տրական հոլովածներ՝ Հայք-Հայոց, Վայք-Վայոց, Տայք-Տայոց, Վիրք-Վրաց, Միրնիք-Միրնեաց, Պարսք-Պարսից, Կասպք-Կասպից, Աղուանք-Աղուանից, Յոյնք-Յունաց, կամք-կամաց, կեանք-կենաց, խելք-խելաց (ի), միտք-մտաց (+ա+ծին), դէմք-դիմաց, գործք-գործոց (արտաքին), Արշակունիք-Արշակունեաց, Արծրունի-Արծրունեաց, Բագրատունիք-Բագրատունեաց, մեռեայք-մեռելոց, Առաքեայք-Առաքելոց (վանք), Մուշ-Մշոյ, մամուլ-մամլոյ, պատիւ-պատուոյ, քոյր-քեռ (+այր=քրոջ ամուսին), գիւղ-գեղջ (+ուկ), արւ-արուր (օրավուր), արուրք-արուրց (հին+ավուրց), յաւէտ-յաւիտեան, մասն-մասին, տիւ-տուրնջեան (լուսատու), դուրք (գործածական էր միայն հոգնակի կամ թերևս երկակի թվով՝ դուրք (դուրս, դրաց, դրօք), հետո հայերենում ևս ստեղծվեց եզակի ձևը՝ դուռն, որից հոգնակին՝ դրունք: Բնաստային տարբերություն կա դրսի և ներսի դռները² - դրաց (+ի), դիք-դից (+արան), յարգանք-յարգանաց (հաւաստիք), հարսանիք-հարսանեաց (հանդէս):

Նախդիրների հետ՝ յաւուր պատշաճի (ի նախդիրը ձայնավորից առաջ փոխվել է ՚ի, որը հ է գրվում, եզակի թվի տրական հոլովի հետ արտահայտում է եզակի ներգոյականի իմաստ) -հավուր պատշաճի, ինքնըստինքյան (ինքն+ըստ+ինքեան), ըստ արժանւոյն (արժանի բառի տրական հոլովն է), ըստ որում (որ հարաբերական դերանվան տրական հոլովն է=որի), ի միջի այլոց (ի+մէջ-միջի+այլք-այլոց), հանձին (ի>յ+անձն գոյականի եզակի թվի տրական հոլովածն, արտահայտում է եզակի ներգոյականի իմաստ):

3. Հայցականի հոլովածներ. ա. դուրք-դուրս, չորք-չորս, աւետիք-աւետիս, բ. նախդիրների հետ՝ առ+աջ, առ+անց, առ+ընթեր, ընդ+դեմ, հոտնկայս (ի>յ+ոտն+կայս), կայ՝ «կայան, կեցած տեղը, տեղ, վիճակ», ոտնկայ. նաւակայք, յոտնկելեաց «ոտքի վրա ուղիղ կանգնած», «կանգնիլ, կալ», բայական ձևով ավելի շատ է գործածվում³, հանուն (յ+անուն), հօգուտ (յ+օգուտ), հուրախություն (ի>յ+ուրախություն), ի փառս (փառք), ի դեմս (դէմք), ի թիվս (թիւս), ի տրիտուր (փոխարինություն, վարձատրություն, փոխհատուցում)⁴, ի հեճուկս (հեճուկ՝ թշնամանք, հեզնական, սիրտ ցավեցնելու գործ, հեճուկս առնել=թշնամություն անել)⁵, ի դեպ (դէպ եղել), դեպի (դէպ+ի), բացի (բաց+ի, ի բաց կաց յինէն, բաց+ատ), համենայն դեպս (յամենայն դէպս - հ<յ<ի նախդիր և դէպք գոյականի հոգնակի թվի

¹ Տե՛ս Արրահամյան Ա., նշվ.աշխ., էջ 56-57:

² Տե՛ս Աճառյան Հր., **Հայերեն արմատական բառարան**, հ. I, 1971, էջ 685:

³ Տե՛ս Աճառյան Հր., նշվ.աշխ., հ. II, 1973, էջ 504-505:

⁴ Տե՛ս Աղայան Էդ., **Արդի հայերենի բացատրական բառարան**, հ II, Եր., 1976, էջ 1461:

⁵ Տե՛ս Աճառյան Հր., նշվ.աշխ., հ. III, Եր., 1977, էջ 78:

հայցական հոլով, արտահայտել է հոգնակի թվի ներգոյականի իմաստ՝ բոլոր դեպքերում), հընթացս (յընթացս-հ<յ<ի նախդիր և ընթացք գոյականի հոգնակի թվի հայցական հոլով, արտահայտել է ներգոյական հոլովի իմաստ՝ ընթացքում), հանձինս (յանձինս-ի>յ+անձն գոյականի հոգնակի թվի հայցական հոլովաձևը՝ անձինք-անձինս): Ի նախդիրով որոշ կապերի իմաստը երբեմն արտահայտվում է համապատասխան բառի տրական հոլովով՝ *ի հաշիվ-հաշվին, ի պատիվ-պատվին, հոգուտ-օգտին*¹:

4. Բացառականի հոլովաձևեր՝ իհարկե (ի հարկե), ի վերջո (վերջո),
օրբստօրե (օրե):

5. Գործիականի հոլովաձևեր

ա. Եզակի թիվ՝ անձամբ, մասամբ, դիտմամբ, պատահմամբ, նկատմամբ, վերաբերմամբ, արամբ (+ի), մեղմիվ (մեղմիւ), ճշտիվ (ճշտիւ), առթիվ (առթիւ), շնորհիվ (շնորհիւ), հազիւ (հազ «դժուարություն», միայն հազիւ գործիականաձև մակբայի մեջ է գործածվում: Հազիվ բառից են ծագում հազիւախօս «ճանրախօս», հազուադէպ, հազուագիւտ (նոր գրականում)², սակավ (սակաւ, սակ՝ «պայման, սահմանված չափ, կուպար, կարգ, դաշն, օրէնք», նոր բառեր են սակարկել, սակագին, սակարկություն, սակարան, սակացոյց)³, բնավ (բնաւ), իրավ (իրաւ), հարկավ (հարկաւ), հավաստյավ (հավաստեաւ), փութով, շուտով:

բ. Հոգնակի թիվ՝ իրորք (իրաւք), կարծոք (կարծեաւք), բարյոք (բարեաւք):

գ. Գրաբարյան գործիական հոլովի վերջավորությունների հետ երբեմն հանդես են գալիս -ի, -ին ածանցները՝ յուրովի (իւրով+ի), կամովին (կամով+ին), գլխովին (գլխով+ին), տակավին (տակաւ+ին): Այդպիսի բառերի -ովի, -ովին, -ավին մասնիկներն այժմ գիտակցվում են իբրև բաղադրյալ ածանց⁴:

Գործիականի հոլովաձևեր կան մի շարք բառերում՝ որովհետև (որ դերանվան գործիական հոլով և հետևիչ բայի ներկայի հիմք, կա նաև հետևակ բառում: Հետ բառի նախնական նշանակությունն է «ոտք», հետի «ոտքով», հետիոտ, ոտնահետ)⁵, հիրավի (իր բառի գործիական հոլովն է իրաւ, հոգնակին՝ իրաւք (իրօք): Իրաւ գործիականը իբրև գոյական է դիտվել «իրաւունք, դատաստան, արդարություն» նշանակությամբ, համարվել է ուղղական, որից կազմվել են մյուս հոլովները, յիրաւի ներգոյականի իմաստ է յ+իրաւ+ի «իրօք, ճշմարիտ է որ»⁶, այսուամենայնիվ, այդուամենայնիվ, այնուամենայնիվ (այս, այդ, այն ցուցական և ամենայն որոշյալ դերանունների գործիական հոլովաձևեր), այսուհանդերձ, այդուհանդերձ, այնուհանդերձ:

¹Աբրահամյան Ս., *Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում*, Եր., 1965, էջ 303:

² Տե՛ս՝ Աճառյան Հր, նշվ.աշխ., հ. III, էջ 5:

³ Տե՛ս՝ Աճառյան Հր, նշվ.աշխ., Եր., հ. IV, 1982, էջ 157:

⁴ Տե՛ս՝ Աբրահամյան Ս., *Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում*, Եր., 1965, էջ 303:

⁵ Տե՛ս՝ Աճառյան Հր, նշվ.աշխ., հ. III, Եր., 1977, էջ 82-83:

⁶ Տե՛ս՝ Աճառյան Հր, նշվ.աշխ., հ. II, Եր., 1973, էջ 250:

II ԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1. Պերբայներից

ա. *Անորոշ դերբայ*՝ գրաբարից ավանդված մի շարք պատճառական բայեր կան, որոնցում բայածանցը քարացել է: Դրանք արդեն չեն գիտակցվում իբրև պատճառական բայեր¹.

զեկուցել - զգալ բայից է, որը կազմված է զ նախդրից և զալ բայից, հին կատարյալն է զեկի, որից և զեկուցանել՝ «լուր տալ, իմացնել, պատմել», իրազեկ «տեղյակ, լուրը իմացած», ինչպես նաև իրազգաց հոմանիշը², որից զեկույց, զեկուցում (զեկույց+ում), *կառուցել* - կառչել բայից, անցյալ կատարյալի հիմքը՝ կառի+ոյց+ան+ել, որից կառույց (ոյ>ու), կառուց+ում,

ծանուցել - ճանաչել բայից, անցյալ կատարյալի հիմքը՝ ծան (ծան+ոթ)+ոյց+ան+ել, որից՝ ծանուցում (ծանույց+ում),

հատուցել - հատանել բայից, անցյալ կատարյալի հիմքը՝ հատ+ոյց+ան+ել, որից (ան+) հատույց (ոյ>ու), հատուց+ում,

հարուցել - յարնչել (= վերաբերել, հարմարվել) բայից, անցյալ կատարյալի հիմքը՝ յարի+ոյց+ան+ել, որից՝ յարույց (ոյ>ու)+ում (հարուցում, խնդրահարույց),

մատուցել - մատչել բայից-մատի+ոյց+ան+ել, որից մատույց (ոյ>ու), մատուցում,

վերցնել - վերանալ բայից-վերաց+ոյց+ան+ել,

փակցնել - փակնուլ բայից՝ փակուցանել՝ «կպցնել, փակցնել»³,

հրամցնել - հրամայել բայը՝ «յետնաբար գրուած է նաև հրամել (իբր գրաբարյան ձև ... միջին հայերէն՝ համել)»: Դա գործածվում է ոչ թե բուն «հրամայել» նշանակությամբ, այլ իբր քաղաքավարական ձև՝ զանազան իմաստներով՝ «ներս եկէք, վե՛ր ելէք, նստեցե՛ք, առե՛ք, կերե՛ք, ասացե՛ք»։ Այսպես ունինք Պլ. հրամմեցէք, հրամմե, Ննիս. հրամմեցէք, համմեցէք, համե... Ղբբ. հմեցե՛ք... Սրանից են հրամցնել «հրաւիրել», հրամեցէք՝ «հրաւեր», հրամեցէք աւոր «հրաւիրեալ»⁴,

կասեցնել - կասիլ կամ կասել (յետ կանգնիլ, դադարիլ, լքանիլ), կասեց+ոյց+ան+ել⁵:

բ. *Ի մասնիկով ապառնի դերբայ*՝ սիրելի, ատելի, խոցելի, ողորմելի, եղկելի, բուժելի, նկատելի, տեսանելի, ուսանելի, ընդունելի, մերժելի, ունելի և այլն:

գ. *Անցյալ դերբայ*՝ ուսյալ, մնացյալ, բանտարկյալ, անիծյալ, հիշյալ, միացյալ, ննջեցյալ, կորուսյալ, հանգուցյալ, յարուցյալ, անցյալ, կոչեցյալ, առաքյալ, մեռյալ, սառուցյալ, որոշյալ, տվյալ (տուեալ) և այլն:

դ. *Ենթակայական դերբայ*՝ ծնող, գրող, ընտրող, ծառայող, ուսանող,

-իչ մասիկով՝ մատնիչ, կառավարիչ, ներկայացուցիչ, փրկիչ, սրբիչ, գրիչ, բրիչ,բացիչ, պատմիչ, նկարիչ, գործիչ, ուսուցիչ, զավթիչ, կախարդիչ, հրապուրիչ, քայքայիչ, եզրափակիչ, կիզիչ, գրավիչ, ավերիչ, արտահայտիչ, թովիչ, հմայիչ և այլն:

2. Պատճառական բայերի անցյալ կատարյալի հիմքից կազմված բառեր

ուսուցանել - ուսանել բայից, ուս+ուցանել, որի անցյալ կատարյալի հիմքն է՝ ուսույց՝ ուսուց (ոյ>ու)+ում=ուսուցում, ինքն+ուսույց,

¹ Տե՛ս Աբրահամյան Ա., Պառնասյան Ն., Օհանյան Հ., *Ժամանակակից հայոց լեզու*, հ. II, 1974, էջ 202:

² Տե՛ս Աճառյան Հր., նշվ.աշխ., հ. II, , էջ 86:

³ Տե՛ս Աճառյան Հր., նշվ.աշխ., հ. IV, էջ 471:

⁴ Տե՛ս Աճառյան Հր., նշվ.աշխ., հ. III, էջ 130:

⁵ Տե՛ս Աճառյան Հր., նշվ.աշխ., հ. II, էջ 531:

ջեռուցանել - ջեռնուլ բայից՝ ջեր/ջեռ+ուցանել, անցյալ կատարյալի հիմքն է ջեռոյց (ոյ>ու)+ում=ջեռուցում,

սնուցանել - սնանել (իմ) բայից՝ սն (սուն)+ուցանել, անցյալ կատարյալի հիմքն է սնոյց (ոյ>ու)+ում=սնուցում,

կորուսանել - կորնչել (իմ) բայից՝ կորի+ուցանել, ց-ն տարրալուծվել, վերածվել է ս-ի, որն էլ կարող է ձայնեղանակ, վերածվել գ-ի, (խել+ա+)կորույս, կորուսյալ,

ելուզանել - ելանել բայից՝ ել+ուցանել>ելուզանել, որից՝ ելուզ+ակ,

փլուզանել - փլչել բայից-փլի+ուցանել>փլուզանել, որից՝ փլուզում,

այտուցանել - այտնուլ բայից՝ այտի+ուցանել, անցյալ կատարյալի հիմքն է այտոյց, որից՝ այտուց (ոյ>ու)+ում, այտուց+իկ,

հանգուցանել - հանգչել բայից՝ հանգի+ուցանել, անցյալ կատարյալի հիմքն է հանգոյց որից՝ հանգուցեալ (ոյ>ու),

մածուցանել - մածնուլ բայից, մածի+ուցանել, անցյալ կատարյալի հիմքն է մածոյց, որից՝ մածուց (ոյ>ու)+իկ,

զարթուցանել - զարթնուլ բայից՝ զարթի+ուցանել, անցյալ կատարյալի հիմքն է զարթոյց, որից՝ զարթոյց (ոյ>ու)+իչ,

սառուցանել - սառչել բայից, սառի+ուցանել, անցյալ կատարյալի հիմքն է սառոյց, որից՝ սառուց (ոյ>ու)+եալ,

թռուցանել - թռչել բայից, թռի+ուցանել, անցյալ կատարյալի հիմքն է թռոյց, որից՝ թռուց (ոյ>ու)+իկ:

Այլ բայերի անցյալ կատարյալի հիմքից՝ բանալ-բաց (բաց+ատ), թանալ - թաց (թաց+ություն), խնուլ - խից (խց+ան), լնուլ - լից (լց+ովի), ընթեռնուլ - ընթերց (ընթերց+ել, ընթերց+ան+ություն, ներկայի հիմքից էլ՝ ընթեռնելի), լուցանել - լոյց (ճրագ+ա+լոյց, լուց+կի), շիջանել (իմ) - շեջ (հր+շեջ,ան+ շեջ), լալ - լաց (լացուկոծ), նստել (իմ) -նիստ (նստ+ա+տեղ), կալ (=մնալ, կանգնել)-կաց (նիստ+ու+կաց), բաննալ - բարձ (համ+բարձ+ում), դառնալ - դարձ (անց+ու+դարձ), ըմպել - արբ (ջր+արբ+ի), ունել (իմ)=բռնել, ունենալ, համարել - կալ (հեր+ա+կալ, ժուժկալ, գահակալ, կալ+ուած, կալ+ան+ավոր), նան՝ ունել+ի):

Դիմավոր բայերի քարացած ձևեր

Կեցցես - կեալ (=ապրել) բայից, անցյալ կատարյալի հիմքը՝ կեաց+ցես, ստորադասական եղանակի II ապառնի ժամանակաձև, II դեմք, եզակի թիվ, ներգործաձև խոնարհում (=ապրես, կապրես, պիտի ապրես, ապրելու ես),

կեցցե - նույնի III դեմք, եզակի թիվ (ապրի, կապրի, պիտի ապրի, ապրելու է),

կեցցեն - նույնի III դեմք, հոգնակի թիվ (ապրեն, կապրեն, պիտի ապրեն, ապրելու են),

հասցե - հասանել բայի ստորադասական եղանակ II ապառնի, III դեմք, եզակի թիվ, ներգործաձև խոնարհում (հասնի, կհասնի, պիտի հասնի, հասնելու է),

իցե - եմ պակասավոր բայի ապառնի ժամանակի III դեմք, եզակի թիվ (ինչ+ն+)իցե (իցե), երբևիցե,

դիզուր - դնել նույնարմատ անկանոն բայի ստորադասական եղանակի II ապառնի, հոգնակի թիվ, I դեմք, ներգործաձև խոնարհում (=դնենք, կդնենք, պիտի դնենք, դնելու ենք),

զուլ - գոլ (=գոյություն ունենալ, լինել) պակասավոր բայի ստորադասական եղանակ, I ապառնի, III դեմք, եզակի թիվ, ներգործաձև խոնարհում,

արասցե - առնել (=անել, կատարել, ստեղծել) նույնարմատ անկանոն բայի ստորադասական եղանակ, II ապառնի, եզակի թիվ, III դեմք, ներգործաձև խոնարհում (Աստուած մի արասցէ=Աստված չանի),

եղիցի - լինել տարարմատ անկանոն բայի ստորադասական եղանակ, II ապառնի, եզակի թիվ, III դեմք, գուգահեռաբար գործածվում է նաև լիցի ձևը,

եղել - նույն բայի սահմանական եղանակ, անցյալ կատարյալ III դեմք, եզակի թիվ (=եղավ),

երևի - երեւիլ բայի սահմանական եղանակ, ներկա ժամանակ, III դեմք, կրավորաձև խոնարհում, եզակի թիվ,

գոյ - գոլ պակասավոր բայի սահմանական եղանակ, ներկա ժամանակ, III դեմք, եզակի թիվ,

բայ - բալ (=խօսել, ասել) առանձին անգործածական բայի սահմանական եղանակ, ներկա ժամանակ, եզակի թիվ, III դեմք, I և II դեմքերը՝ բամբասանք բառում (II դեմքը՝ բաս, եղանակավորման իմաստ է արտահայտում՝ Բա՛ս, սրան Թիֆլիս կասեն: Հ.Թ., Գիքորը),

համարյա - համարել բայի բուն հրամայական, ներգործաձև խոնարհում, եզակի թիվ,

գրեթե (գրեա՛+թե) - առաջին բաղադրիչը գրել բայի բուն հրամայականն է, ներգործաձև խոնարհում, եզակի թիվ,

երթ - երթալ տարարմատ անկանոն բայի բուն հրամայական, եզակի թիվ, ներգործաձև խոնարհում,

լեր - ուտել տարարմատ անկանոն բայի բուն հրամայական, կրավորաձև խոնարհում, եզակի թիվ,

գոնե - գոլ պակասավոր բայի հրամայականն է՝ գոնեա (բարբառներում՝ գոնեա, գոնե)¹,

արի,արիք - յառնել (=առողջանալ, վեր կենալ) նույնարմատ անկանոն բայի բուն հրամայական, եզակի և հոգնակի թիվ (=վեր կաց և վեր կացեք՝ արի՛ք դիցագունք), լուր - լսել նույնարմատ անկանոն բայի բուն հրամայական, կրավորաձև խոնարհում, եզակի թիվ:

Հայտնի է, որ հայերենը երկու ուղղագրություն ունի՝ բուն մեսրոպյան, դասական կամ հին (գրաբարյան) և նոր կամ արևելահայ: Մեր պատմության ներկա շրջանում վերանայվել են անցյալի սխալները, հայ ժողովրդի երկու հաստատվածների միջև սերտացել են հոգևոր, մշակութային, գիտական փոխհարաբերությունները: Այսօր ուղղակի անհրաժեշտություն է ինչպես գրաբարի, այնպես էլ հայոց լեզվի երկու տարբերակների՝ արևելահայերենի և արևմտահայերենի, դասական ուղղագրության իմացությունը:

Պետք է հիշենք, որ մեր քաղաքական անկախությունը նոր հարաբերությունների հիմք է դարձել նաև հայոց լեզվի գործառության բնագավառներում, իսկ «մեր լեզուն մենք ենք, որ կանք»:

¹ Տե՛ս Աճառյան Հր., նշվ.աշխ., հ. I, էջ 579:

Գրականություն

1. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976:
2. Աբրահամյան Ս., Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Եր., 1965:
3. Աբրահամյան Ա., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Ժամանակակից հայոց լեզու, հ. II, 1974:
4. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, հ II, Եր., 1976:
5. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. I, 1971:
6. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. II, 1973:
7. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. III, Եր., 1977:
8. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. IV, Եր., 1982:
9. Առաքելյան Վ., Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Եր., 1981:

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, ք.գ.թ. Հ.Ս.Ղազարյանը: